

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/2

23 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Կողբագրոտրանս» ՍՊԸ 25.08.2014 թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի 17.02.2014 թ-ի թիվ 22 որոշման դեմ:

«Կողբագրոտրանս» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի տարածքային հարկային տեսչության պետի 12.02.2014 թ-ի թիվ 22 որոշման համաձայն «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ից ենթակա է գանձել 1.308.466 դրամ հարկային պարտք, այդ թվում՝ 3.282 դրամ ԱԱՀ-ի գծով տույժ, 5 դրամ պարտադիր սոցիալական վճարների գծով տուգանք և 1.305.179 դրամ հաստատագրված վճարի գծով պարտք, որից 240.584 դրամ ապառք, 1.064.595 դրամ՝ ժամկետանց օրերի տույժ:

«Կողբագրոտրանս» ՍՊԸ-ն գտնում է, որ նշված որոշումը կազմվել է օրենքի խախտմամբ և ենթակա է վերացման՝ հետևյալ հիմնավորմամբ:

Բողոքում մեջբերվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ 29.1-րդ հոդվածներով սահմանված դրույթները:

Տվյալ դեպքում դեռևս 25.06.2009 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոյեմբերյանի ՏՀՏ-ի (ՀՀ կառավարության 12.07.2012 թ-ի թիվ 840-Ն որոշմամբ Նոյեմբերյանի տարածքային հարկային տեսչությունը վերակազմակերպվել է միացման ձևով և այն միացվել է Իջևանի տարածքային հարկային տեսչությանը) կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ն հաստատագրված վճարի գծով ունեցել է 26.767 դրամի գերավճար:

Բացի այդ, ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոյեմբերյանի ՏՀՏ 04.12.2009 թ-ին կազմված ստուգման ակտի համաձայն՝ «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ում հաստատագրված վճարի գծով խախտումներ չեն հայտնաբերվել: Ընդ որում, նշված ակտով հաստատագրված վճարի գծով ստուգման ժամանակացույցը նշված է եղել 29.08.2006–30.09.2009 թվականները: Ավելին, նույն տեսչության 08.06.2012 թ-ին կազմված ստուգման ակտի համաձայն՝ «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ում հաստատագրված վճարի գծով կրկին խախտումներ չեն հայտնաբերվել: Այսինքն, վերը նշված տեղեկանքով և ստուգման ակտերով հարկային տեսչությունը արձանագրել է, որ «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ն 08.06.2012 թ-ի դրությամբ հաստատագրված վճարի գծով պարտավորություն չի ունեցել: Հետևաբար, նման պարագայում ընկերությունը որևէ կերպ չի կարող 2014 թ-ին ունենալ 2007 թ-ի փետրվարից առաջացած հաստատագրված վճարի գծով պարտավորություն, քանի որ հաստատագրված վճարի գծով պարտավորության բացակայության փաստը հաստատվել, արձանագրվել և ընդունվել է հենց հարկային տեսչության կողմից: Նույնիսկ եթե ընդունենք, որ ինչ-ինչ պատճառներով հարկային տեսչությունը 2014 թ-ին հայտնաբերել է 2007 թ-ի փետրվարից առաջացած և դրա նկատմամբ առավելագույնը 365 օր հաշվարկված տույժերի մասով հարկային պարտավորություն, միևնույն է այն ենթակա չէ բռնագանձման, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Մինչդեռ, ըստ հարկային տեսչության, հաստատագրված վճարի գծով խախտումը հայտնաբերվել է առնվազն 2014 թ-ին, քանի որ այլ բան Իջևանի ՏՀՏ-ի կողմից չի վկայակոչվել վիճարկվող որոշման մեջ: Հետևաբար, հարկային տեսչության կողմից բաց է թողնվել հարկային պարտավորություններ առաջադրելու վաղեմության ժամկետը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Վերը նշվածից հետևում է, որ 17.02.2014 թ-ի որոշումը ոչ իրավաչափ է և ընդունվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ և ըստ էության չպետք է ընդունվեր:

Բացի այդ, վիճարկվող որոշումը «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ն ստացել է 27.02.2014 թ-ին, իսկ որոշման մեջ վերադաս վարչական մարմնին բողոքարկելու ժամկետը նշվել է 6 ամիս՝ այն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, հետևաբար բողոքը ներկայացվում է օրենքով սահմանված ժամկետում:

Ելնելով վերոգրյալից՝ «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ն խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Իջևանի ՏՀՏ-ի 2014 թ-ի փետրվարի 17-ի թիվ 22 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով «Կողբագրոտրանս» ՍՊԸ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 17.02.2014 թ-ի դրությամբ «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.308.466 դրամ, որը բաղկացած է ավելացված արժեքի հարկի, հաստատագրված վճարների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված պարտավորություններից: Մասնավորապես, ԱԱՀ-ի գծով հաշվարկված պարտավորությունը կազմել է 3282 դրամ, որն առաջացել է 2013 թ-ի 2-րդ եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլված պարտավորության գումարը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժից:

Հաստատագրված վճարների գծով հաշվարկված պարտավորությունը կազմել է ընդամենը 1.305.179 դրամ, այդ թվում՝ հաստատագրված վճար 240.584 դրամ և վերջինիս նկատմամբ հաշվարկված տույժ 1.064.595 դրամ: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված պարտավորությունը կազմել է 5 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 17.02.2014 թ-ին ընդունվել է թիվ 22 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Կողբագրոտրանս» ՍՊԸ-ից 1.308.466 դրամ գանձելու մասին:

Հաստատագրված վճարների գծով հաշվարկված պարտավորության վերաբերյալ նշվեց հետևյալը.

«Կողբագրոտրանս» ՍՊԸ կողմից հարկային տեսչություն ներկայացված ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հայտարարությունների (այսուհետ՝ Հայտարարություններ) փաստաթղթային ուսումնասիրությունից պարզվել է, որ 2008 թ-ին և 2009 թ-ին «ՌեՆՈ պրեմիում» մականիշի 442LS02 պետհամարանիշի ավտոմեքենայի վերաբերյալ ներկայացված հայտարարություններում արտացոլված տվյալները տեխնիկական վրիպակի հետևանքով հարկային տեսչությունում չեն գրանցվել:

Վերոգրյալ վրիպակը 13.07.2009 թ-ին ուղղվել է, որի արդյունքում «Կողբագրոտրանս» ՍՊԸ անձնական հաշվի քարտում կատարվել է հաստատագրված վճարի գծով պարտավորությունների վերահաշվարկ: Կատարված վերահաշվարկի հետևանքով հաստատագրված վճարի գծով պարտավորությունը 17.02.2014 թ-ի դրությամբ կազմել է ընդամենը 1.305.179 դրամ, այդ թվում՝ հաստատագրված վճար 240.584 դրամ և վերջինիս նկատմամբ հաշվարկված տույժ 1.064.595 դրամ:

Վերոգրյալ վերահաշվարկը կատարելուց հետո հարկային տեսչությունում ընկերության ներկայացուցչին (հաշվապահին) ծանոթացվել է «Կողբագրոտրանս» ՍՊԸ ներկայացված հայտարարություններով հաստատագրված վճարի գծով առաջացած պարտավորությունների վերաբերյալ:

«Կողբագրոտրանս» ՍՊԸ բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 17.02.2014 թ-ի թիվ 22 որոշումը կազմվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ և 30.1-րդ հոդվածների դրույթների խախտմամբ հարկ է նշել, որ դրանք հիմնավոր չեն, քանի որ քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 17.02.2014 թ-ի թիվ 22 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները հաշվարկվել են հիմք ընդունելով «Կողբագրոտրանս» ՍՊԸ կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված տվյալները, ինչպես նաև դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերը:

Քննարկվող դեպքում, չի կարող խոսք գնալ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման համար հիմք հանդիսացած տեղեկություններն օրենքի խախտմամբ ձեռք բերված լինելու, դրանց ծանոթանալու և բացատրություններ ներկայացնելու հնարավորություն ընձեռնված չլինելու, ինչպես նաև համապատասխան խախտումները դրանք կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո հայտնաբերված լինելու մասին, քանի որ հարկային պարտավորությունները հաշվարկվել են «Կողբագրոտրանս» ՍՊԸ կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների հիման վրա:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի 17.02.2014 թ-ի թիվ 22 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

